Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-465-19.03.2014,30.05.2014-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության 1995 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-16 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «անձինք» բառը փոխարինել «ազգությամբ հայերը» բառերով, իսկ «2014 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերը՝ ***«2016 թվականի դեկտեմբերի 31-ը»*** բառերով:

Հոդված 2. **Օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.**

«Համաձայնության բացակայության դեպքում երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն՝

1) եթե նա ծնվել է Հայաստանի Հանրապետությունում կամ.
2) եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք չբերելու դեպքում դառնում է քաղաքացիություն չունեցող անձ կամ.
3) եթե ծնողները մշտապես բնակվում են Հայաստանի Հանրապետությունում:»:

Հոդված 3. Օրենքի 12-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«*Հոդված 12.* Քաղաքացիություն չունեցող անձանց երեխայի քաղաքացիությունը, ինչպես նաեւ այն երեխայի քաղաքացիությունը, ում ծնողների քաղաքացիությունն անհայտ է կամ ում ծնողները չեն կարող իրենց քաղաքացիությունը փոխանցել երեխային՝ իրենց քաղաքացիության երկրի (երկրների) օրենսդրության համաձայն

1. Հայաստանի Հանրապետությունում ծնված երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, եթե՝

1) ծնողները քաղաքացիություն չունեցող անձինք են.

2) ծնողների քաղաքացիությունն անհայտ է.

3) ծնողները այլ երկրի (երկրների) քաղաքացիներ են, սակայն չեն կարող իրենց քաղաքացիությունը փոխանցել երեխային՝ իրենց քաղաքացիության երկրի (երկրների) օրենսդրության համաձայն.

4) ծնողներից մեկը քաղաքացիություն չունեցող անձ է, իսկ մյուսը՝ այլ երկրի քաղաքացի, որն իր քաղաքացիության երկրի օրենսդրության համաձայն չի կարող իր քաղաքացիությունը փոխանցել երեխային.

5) ծնողներից մեկը քաղաքացիություն չունեցող անձ է, իսկ մյուսի քաղաքացիությունն անհայտ է.

6) ծնողներից մեկի քաղաքացիությունն անհայտ է, իսկ մյուսն այլ երկրի քաղաքացի է, որն իր քաղաքացիության երկրի օրենսդրության համաձայն չի կարող իր քաղաքացիությունը փոխանցել երեխային:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր ստանալու համար ներկայացված դիմումի հիման վրա:

3. Սույն օրենքի իմաստով երեխան Հայաստանի Հանրապետությունում ծնված է համարվում նաեւ, եթե ծնվել է Հայաստանի Հանրապետության դրոշի տակ օրինական կարգով գտնվող կամ Հայաստանի Հանրապետության տարբերանշանը կրող, Հայաստանի Հանրապետության օդանավակայանում կամ նավահանգստում գրանցված օդային, ծովային կամ գետային նավում:

4. Սույն հոդվածի իմաստով ծնողի քաղաքացիությունը համարվում է անհայտ, եթե մինչեւ երեխայի քաղաքացիությունը որոշելու համար վերջնական որոշում կայացնելու պահը **Հայաստանի Հանրապետության կառավարության** լիազոր մարմնի կողմից ձեռնարկված անհրաժեշտ եւ բավարար միջոցների արդյունքում հնարավոր չի եղել որոշել ծնողի քաղաքացիությունը:»:

Հոդված 4. Օրենքի 13-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում «գործունակ» բառից հետո լրացնել «(բացառությամբ անգործունակ ճանաչված անձի կողմից սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դեպքի)» բառերով.

2. 2-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 5-րդ կետով.

«5) որը Հայաստանի Հանրապետությունում ճանաչվել է փախստական, կամ հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձ:».

3. 3-րդ մասում «անձը» բառից հետո լրացնել «կամ անգործունակ անձը, որի խնամակալը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է:» բառերով.

4. 5-րդ մասում «անձամբ» բառից հետո լրացնել «, իսկ անգործունակ ճանաչված անձի դեպքում՝ խնամակալի միջոցով,» բառերը:

Հոդված 5. Օրենքի 14-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 2-րդ մասով.

«Այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերելու նպատակով Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցրած, սակայն այլ երկրի քաղաքացիություն չստացած անձն, իր դիմումի համաձայն, կարող է վերականգնել Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը:»:

Հոդված 6. Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն է ձեռք բերում ծնողներից մեկը, իսկ մյուսն օտարերկրյա քաղաքացի է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ապա նրանց երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն՝

1) եթե առկա է ծնողների գրավոր համաձայնությունը կամ.

2) եթե երեխան բնակվում է Հայաստանի Հանրապետությունում, և առկա է Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը կամ.

3) եթե ծնողների (ծնողի) համաձայնության բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք չբերելու դեպքում դառնում է քաղաքացիություն չունեցող անձ:»:

Հոդված 7. Օրենքի 17-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4-րդ եւ 5-րդ մասերով.

1. «Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում երեխան կորցնում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը, եթե նա ունի կամ ձեռք է բերում այլ պետության քաղաքացիություն:»:

2. «Սույն հոդվածով նախատեսված դեպքերում երեխան կորցնում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը՝ քաղաքացիության դադարեցման հետեւանքով՝ ծնողի կողմից ներկայացված դիմումի հիման վրա՝ սույն օրենքով Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու համար նախատեսված ընդհանուր հիմունքներով»:

Հոդված 8. Օրենքի 19-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում «դիմումով» բառից հետո լրացնել «, եթե նա ունի կամ ձեռք է բերում այլ պետության քաղաքացիություն» բառերով.

2. 2-րդ մասում «, պահպանում է» բառերից առաջ լրացնել «կամ օտարերկրյա քաղաքացի» բառերով:

Հոդված 9. Օրենքի 21-րդ հոդվածում «իրավունքից» բառից հետո լրացնել «եւ եթե երեխան ունի կամ ձեռք է բերում այլ պետության քաղաքացիություն» բառերով:

Հոդված 10. Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2) կեղծ փաստաթղթերի կամ կեղծ տվյալների հիման վրա քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում, եթե անձի կողմից կեղծ փաստաթղթեր կամ կեղծ տվյալներ ներկայացնելը հիմնավորվել է օրենքով սահմանված կարգով եւ արարքը կատարելու պահից ***չի անցել 5 տարի.»:***

Հոդված 11. Օրենքի 24-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում «քաղաքացիություն» բառից հետո լրացնել «կամ դուրս գալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից, եթե ունի այլ պետության քաղաքացիություն:» բառերով.

2. 2-րդ մասում լրացնել հետեւյալ բովանդակությամբ 5-րդ կետ.

«5) նա չունի այլ պետության քաղաքացիություն եւ մինչեւ Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հրամանագրի ստորագրումը չի ներկայացնում օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից տրված գրավոր հավաստում (տեղեկանք) տվյալ պետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավական հնարավորության մասին:»:

Հոդված 12. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

h/h	*Առարկության, առաջարկության հեղինակը*	*Առարկության, առաջարկության բովանդակությունը*	*Եզրակացություն*	*Կատարված փոփոխությունները*
1.	*ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Թևան Պողոսյան*	Առաջարկվել է Նախագծի 10-րդ հոդվածով գործող օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում կեղծ փաստաթղթերի կամ կեղծ տվյալների հիման վրա քաղաքացիություն ձեռք բերելու համար քաղաքացիությունը դադարեցնելու դեպքում արարքը կատարելու համար 10 տարվա փոխարեն սահմանել 5 տարի ժամկետ:	Հաշվի առնելով միջազգային փորձը և ներպետական օրենդրությունը՝ առաջարկությունն ընդունվել է:	Նախագծի 10-րդ հոդվածով գործող օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում կեղծ փաստաթղթերի կամ կեղծ տվյալների հիման վրա քաղաքացիություն ձեռք բերելու համար քաղաքացիությունը դադարեցնելու դեպքում արարքը կատարելու համար վաղեմության ժամկետը սահմանվել է 5 տարի՝ հիմք ընդունելով այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածով փաստաթղթեր կեղծելու համար նախատեսված քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետը, որպես միջին ծանրության հանցագործություն, 5 տարի է:

2.	*ՀՀ կառավարություն*	1. Առաջարկում ենք նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «2014 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերը փոխարինել «2016 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերով՝ Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց կամ օտարերկրյա քաղաքացի չհանդիսացող նախկին ԽՍՀՄ այլ հանրապետությունների քաղաքացիների համար սահմանվող խրախուսական նորմը հնարավորինս երկար կիրառելու նպատակով: 2. Օրենսդրական տեխնիկայի կանոնները պահպանելու նպատակով առաջարկում ենք՝ նախագծի 1-ին հոդվածում «կետը» բառը փոխարինել «կետում» բառով, 4-րդ հոդվածում «հոդվածում» բառը՝ փոխարինել «հոդվածի» բառով, իսկ «մասը» բառը՝ «մասում» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 36-րդ հոդվածի պահանջները: Նույն առաջարկությունը վերաբերում է նաև նախագծի 8-րդ, 9-րդ և 11-րդ հոդվածներին:	1. Առաջարկությունն ընդունվել է: 2. Առաջարկությունն ընդունվել է:	Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «2014 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերը փոխարինվել են «2016 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերով: Կատարվել են համապատասխան փոփոխություններ: